հանդերը. ապա մտնում է Սիւնուր դաշտը եւ միանում է Սիւնուր առուին։

Վավուկ լեռներից դէպի արեւելք ուղղուած իջնում է Կալա առ-ը, որը ընդունում է բազմաթիւ ագուներ եւ ոռոգում է Զիլ, (Զեօլ,) Կըլըջօրէն, Գէյլեր, Գոնդոլատ, Սեմֆիր եւ Կադրաֆ գեղերի հանդերը։

Զիարէթ լեռներից իջնում է հիւսիսից-հարաւ Բալախոռ առ-ը եւ ոռոգում է Կիլխան, Էրմենէ եւ Բալախոռ գեղերը, միանում է Հնդի, Լոռի Պուլուր, Կալասու առուներին, ուղղուում է արեւելք ոռոգելով Քոլ, Ուստիկ-Օմտեղ, Կիլխան, Վալիշէն-Արմուտլի եւ Մենզէ գեղերը։ Դէպի արեւելք ուղղուելով Բալախոռ գետը ձախից Զիարէթ լ-ից իջած Էրքէնիս[1] առուակն է ընդունում, որը ոռոգում է Էրֆէնիս (Արքունիս), Խանեաղուբ, Զիֆթլիկ, Տորոնդաանոս, Խարդիշ

Ուրէն-Շէհերը շատ հին անցեալ ունին, ոչ միայն անունով, այլ աւերակների շարքերով։

1 Բալախոռի աւազանի ինչսունի չափ գեղերի աւերակները Հովսիկի եւ Բայբուրդի շէնների անունների նման հին աւանդական, նոյն իսկ խալդական եւ Հաթթական շրջանի մնացորդներ են։ Անշուշտ Սելջուկ Թաթարների եւ Օսմանեանների շրջանում, մանաւանդ Խալամ հոգեւորականութեան միջոցով շատ լեռների, ջրերի, գեղերի եւ դաշտերի անունները եղծուել, փոփոխուել են, սակայն 80%-ը մեծ մասամբ պահպանել են իրենց նախնական անունները։ Ահա 60 տարի է, որ Օսմանները Խարբերդի անունը փոխել եւ Մամուրէթ-ուլ-ազիզ են նշանակել. բայց ժողովուրդը միշտ էլ հին անունն է գործածել։ Նիկոլա Ա. ցարը Գիւմրու անունը փոխեց եւ կնոջ անուամբ՝ Ալեքսանդրապոլ դրեց։ բայց բնակչութիւնը չմոռացաւ Գիւմրին։